

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



Բրյուսել, 2008 թվականի նոյեմբերի 27

C(2008) 7406 վերջնական

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

2008 թվականի նոյեմբերի 11-ի

ԵՀԳԳ 2007-2013 թթ. միջսահմանային համագործակցության՝ Եվրոպական
համայնքների ընդհանուր բյուջեի 19 08 02 01 և 19 08 02 02 հոդվածներով
ֆինանսավորվող «Մև ծով 2007-2013թթ.» համատեղ գործառնական ծրագրի մասին

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

2008 թվականի նոյեմբերի 11-ի

ԵՀԳԳ 2007-2013թթ. միջսահմանային համագործակցության՝ Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի 19 08 02 01 և 19 08 02 02 հոդվածներով ֆինանսավորվող «Մև ծով 2007-2013թթ.» համատեղ գործառնական ծրագրի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման հիմնական դրույթները սահմանող» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1638/2006 (ԵՀ) կանոնակարգը¹ և, մասնավորապես, դրա II, III և IV բաժինները և 6(1)(բ), 9 ու 12(3) հոդվածները,

Քանի որ

(1) Հանձնաժողովն ընդունել է Միջսահմանային համագործակցության ռազմավարության փաստաթուղթը² և 2007-2010թթ. բազմամյա ինդիկատիվ ծրագիրը, որտեղ նշված են հետևյալ գերակայությունները. 1) ընդհանուր սահմանի երկու կողմերում գտնվող տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման խթանում, 2) համատեղ աշխատանք ուղղված ընդհանուր մարտահրավերների դիմակայմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրը, հանրային առողջապահությունը, ինչպես նաև կազմակերպված հանցավորության կանխումը և դրա դեմ պայքարը, 3) տնտեսապես արդյունավետ գործող և անվտանգ սահմանների ապահովում, 4) տեղական միջսահմանային մակարդակով միջանձնային շփումների խթանում,

(2) Հանձնաժողովն ընդունել է «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման հիմնական դրույթները սահմանող» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1638/2006 (ԵՀ) կանոնակարգի շրջանակներում ֆինանսավորվող միջսահմանային համագործակցության ծրագրերի իրականացմանն ուղղված կանոնները:³

«Մև ծով 2007-2013թթ.» համատեղ գործառնական ծրագրի ընդհանուր նպատակն է՝ սևծովյան ավազանի տարածքում ավելի ամուր և կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը խթանելու միջոցով հասնել տարածաշրջանային առավել սերտ գործընկերության և համագործակցության՝ տվյալ տարածաշրջանի նկատմամբ կիրառվող ԵՄ տարածաշրջանային քաղաքականությանը՝ «Սևծովյան համադաշնեցմանը» համապատասխան:

Այս նպատակը կիրագործվի՝ հաշվի առնելով ընդհանուր արժեքները կիսելու, հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելու հատկապես գենդերային խտրականությունը նվազեցնելու և սոցիալ-տնտեսական զարգացման հարցում կանանց մասնակցությունը խթանելու, մարդու հատկապես տարածաշրջանային նշանակության

¹ ՊՏ L 310, 09.11.2006թ., էջ 1:

² PE/2007/294, C/2007/672

³ Հանձնաժողովի թիվ 951/2007 (ԵՀ) կանոնակարգ, ՊՏ L 210/10, 10.08.2007թ

գործունեության արդյունքում բնապահպանական կայունության ամրապնդման և սևծովյան ավազանի համայնքների մշակութային ինտեգրմանն ու փոխըմբռնմանը նպաստելու սկզբունքները,

(3) Ծրագրով կենտրոնական դեր կհատկացվի տվյալ աշխարհագրական տարածքում համագործակցության երեք գերակայությունների. 1. աջակցություն տնտեսական զարգացմանն ուղղված գործընկերությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղական նախաձեռնություններին, որոնք նպատակաուղղված են փոքր և միջին ձեռնարկությունների և պետական նախաձեռնությունների համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, ինչպես նաև առավել արդիական այնպիսի սպառնալիքներին դիմակայելու համար ուղիների որոնմանը, ինչպես օրինակ ամենահմուտ աշխատողների միգրացիան դեպի ԵՄ արդյունաբերական երկրներ, 2. շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության միջոցների ու կարողությունների ցանցի ստեղծում՝ Սև ծովի հարավային և հյուսիսային ափամերձ շրջանների միջև սերտ հարաբերությունների միջոցով ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու և սպառնալիքներն ու թերությունները հաղթահարելու համար, 3. տարածաշրջանում տեղական հաստատությունների միջև ընդհանուր մշակութային միջավայր ստեղծելու նպատակով աջակցություն մշակութային և կրթական նախաձեռնություններին, որոնք ուղղված կլինեն տեղական զարգացման քաղաքականության իրականացման ցածր մակարդակի վրա գտնվող՝ վարչական կարողությունների հետ կապված խնդիրների, ինչպես նաև միգրացիայի մարտահրավերների ու կոնֆլիկտների ռիսկերի հաղթահարմանը,

(4) սույն որոշումն իրենից ներկայացնում է ֆինանսավորման մասին որոշում՝ «Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի մասին»⁴ Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի թիվ 1605/2002 կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ) 75-րդ հոդվածի և «Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի»⁵ իրականացման մանրամասն կանոնները սահմանող՝ Հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2342/2002 կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ) 90-րդ հոդվածի իմաստով,

(5) սույն որոշումը ներառում է վճարումն ուշացնելու պատճառով Խորհրդի թիվ 1605/2002 կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ) 83-րդ հոդվածի և Հանձնաժողովի թիվ 2342/2002 կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ) 106(5) հոդվածի հիման վրա գանձվող ցանկացած հնարավոր տոկոսագումար,

(6) Հանձնաժողովից պահանջվում է սահմանել «Էական փոփոխություն» հասկացությունը թիվ 2342/2002 կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ) 90(4) հոդվածի իմաստով՝ ապահովելու, որ սույն որոշման մեջ կատարվող ցանկացած էական փոփոխություն անցնի նույն ընթացակարգը, ինչ սկզբնական որոշումը,

⁴ ԵՄՊՏ L 248, 16.09.2002թ., էջ 1. Թիվ 1995/2006 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ) (ԵՄՊՏ L 390, 30.12.2006թ., էջ1) և Խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1525/2007 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ) (ՊՏ L 343, 27.12.2007թ., էջ 9.) վերջին անգամ փոփոխված կանոնակարգը:

⁵ ԵՄՊՏ L 357, 31.12.2002թ., էջ 1: Թիվ 478/2007 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ) (ԵՄՊՏ L 111, 28.04.2007թ., էջ 13) վերջին անգամ փոփոխված կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑ.

Հոդված 1

ԵՀԳԳ 2007-2013թթ. միջսահմանային համագործակցության «Սև ծով 2007-2013թթ.» համատեղ գործառնական ծրագիրը, որի տեքստը շարադրված է հավելվածում, հաստատված է:

Հոդված 2

2007-2013թթ. ժամանակահատվածի համար Համայնքի կողմից ցուցաբերվող առավելագույն աջակցությունը կազմում է 17 305 944 եվրո:

Այս գումարը ներառում է Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի՝ 19 08 02 01 և 19 08 02 02 տողերի գծով համապատասխանաբար 8 652 948 եվրո և 8 652 996 եվրո ֆինանսավորում:

2008 թվականի համար Համայնքի կողմից տրամադրվող առավելագույն օժանդակությունը կազմում է 2 378 974 եվրո (այսինքն՝ 1 189 348 եվրո և 1 189 626 եվրո՝ բյուջեի համապատասխանաբար 19 08 02 01 և 19 08 02 02 տողերով):

Համապատասխան տրանշերը կփոխանցվեն տարեկան կտրվածքով:

Սույն որոշումը նաև ներառում է վճարումն ուշացնելու հետևանքով զանձվող ցանկացած հնարավոր տոկոսագումար:


Հոդված 3

Բոլոր հատուկ գործողությունների համընդհանուր ինդիկատիվ բյուջեի շրջանակներում կատարվող ճշգրտումները, ինչպես նշված է Եվրոպական հանձնաժողովի (ԵՀ) 951/2007 կանոնակարգի 7-րդ հոդվածում, էական չեն համարվի՝ պայմանով, որ դրանք չունենան նշանակալի ազդեցություն «Սև ծով 2007-2013թթ.» համատեղ գործառնական ծրագրի բնույթի և նպատակների վրա:

Թույլտվություն տվող պաշտոնատար անձը կարող է, պատշաճ ֆինանսական կառավարման սկզբունքներին համապատասխան, Ծրագրում կատարել ոչ էական փոփոխություններ:

Կատարված է Բյուրոսելում, 2008 թվականի նոյեմբերի 27-ին:

*Հանձնաժողովի կողմից՝
Բենիտա Ֆելլեբեռն-ՎԱԼԴՆԵՐ
Հանձնաժողովի անդամ*



ՀԱՎԵԼՎԱԾ

«Մև ծով 2007-2013թթ.» համատեղ գործառնական ծրագիր